4. Մինչև սույն ենթահավելվածի 1-ին կետով նախատեսված նվազեցումն ավտոմատ իրականացնող տեխնիկածրագրային փոփոխությունների ներդրումը Ապահովագրողների կողմից Ցանկում ներառված անձանց հետ ԱՊՊԱ պայմանագրեր կնքելիս սույն գլխով նախատեսված կարգով և արտոնության չափով Տեղեկատվական համակարգից ստացված ԲՄ դասի ինքնուրույնաբար նվազեցումը և դրա ԱՊՊԱ պայմանագրում արտացոլումը չի դիտարկվում որպես սույն կանոնների խախտում:

ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԻՄՔԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՊԱՀԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

N	ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքը	ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման պահը	ՊԿԱ-ին ներկայացվող փաստաթղթերի ցանկը	ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի համապատասխան մասի վերադարձման և դրա հաշվարկման կարգն ու պայմանները
1.	Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովագրից տարբերվող այլ անձի անունով՝ բացառությամբ Եթե Ապահովագիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վարձակալն է: Եթե Ապահովագիրը Ավտոտրանսպորտային միջոցի ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալն է, ապա ԱՊՊԱ պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է այն	Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի,	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ (պայմանագրով նախատեսված

	դեպքում, եթե դադարել է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը, և Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվել Ապահովագրի անունով կամ գրանցվելուց հետո օտարվել է այլ անձի		2. Դադարեցման համապատասխան հիմքը հավաստող փաստաթուղթը, եթե դրան ՊԿԱ-ն չի տիրապետում 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է համապատասխան գրավոր դիմում ՊԿԱ-ին ներկայացնելու օրվանից սկսած, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ
2.	Ավտոտրանսպորտային միջոցը հանվել է (ներառյալ՝ ժամանակավոր) հաշվառումից	Ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու օրվան հաջորդող օրը՝ բացառությամբ խոտանման հիմքով հաշվառումից հանվելու, հաշվառումից ժամանակավոր հանվելու, ինչպես նաև հաշվառումից հանվելու այնպիսի դեպքերի, երբ նույն պահին ավտոտրանսպորտային միջոցը հաշվառվում է այլ անձի անվամբ (անվանմամբ), որոնց դեպքում պայմանագիրը		

		վաղաժամկետ դադարում է ավտոտրանսպորտայ ին միջոցը հաշվառումից հանվելու պահին		
3.	ՊԿԱ-ն լուծարվել է, և Ապահովագիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այն ապահովագրական ընկերության հետ, որին ՊԿԱ-ն փոխանցում է ապահովագրական պորտֆելը	Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի, 2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	
4.	Օրենքով նախատեսված դեպքերում ՊԿԱ-ն իր ապահովագրական պորտֆելը փոխանցում է այլ ապահովագրական ընկերության, և Ապահովագիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այդ ապահովագրական ընկերության հետ			
5.	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ԱՊՊԱ պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ԱՊՊԱ պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով		1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի 2. ԱՊՊԱ պատահարի վրա հասնելու	

			հնարավորության կամ ապահովագրական ռիսկի գոյության վերացումը հիմնավորող փաստաթղթեր, եթե դրանց ՊԿԱ-ն չի տիրապետում, 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	
6.	Ապահովադրի պահանջով	Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի դիմումի մեջ նշված օրը, բայց ոչ շուտ, քան դիմումի ներկայացման ամսաթվին հաջորդող օրը	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի, 2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ հաշվարկման ժամանակ որպես հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 80%-ը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * 80 % / պայմանագրի գործողության օրեր) * պայմանագրի չլրացած օրեր – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած:

				ՊԿԱ-ն իրավունք ունի իր հայեցողությամբ սույն հաշվարկում 80%-ի փոխարեն հիմք ընդունել ապահովագրավճարի 80-ից ավելի բարձր՝ մինչև 100%-ը ներառյալ:
7.	ՊԿԱ-ի պահանջով, եթե Ապահովագրորդ թույլ է տվել սույն կանոնների էական խախտում: Ընդ որում, ՊԿԱ-ն իրավունք չունի պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Ապահովագրորդ խախտել է սույն կանոնների 35-րդ կետով սահմանված պահանջը, սակայն արդեն վերացել են ապահովագրական ռիսկի մեծացման վրա որակապես ազդող փոփոխությունները, ինչպես նաև եթե Ապահովագրորդ կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը կատարվել է ոչ իր մեղքով	ՊԿԱ-ի կողմից խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում՝ նրա պահանջը ներկայացվելուց անմիջապես հետո	-	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարի և այդ պայմանագրով ՊԿԱ-ի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար - տվյալ պայմանագրով կատարված հատուցումների գումար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած
8.	Ապահովագրորդի պահանջով, եթե ՊԿԱ-ն թույլ է տվել պայմանագրի պայմանների էական խախտում	Ապահովագրորդի կողմից նման խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում՝ նրա	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ հիմնավորելով ՊԿԱ-ի կողմից կատարված	Վերադարձվում է հետևյալ մեծություններից առավելագույնը՝ 1. վճարված ապահովագրավճարներ և այդ պայմանագրով ՊԿԱ-ի կողմից վճարված ապահովագրական

		պահանջը ներկայացվելուց անմիջապես հետո	խախտումները՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի, 2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	հատուցումների դրական տարբերությունը, կամ 2. պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – Ապահովադրի կողմից չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: Այն դեպքում, երբ պայմանագրի լուծման հիմք հանդիսացած խախտումը պայմանագրով վճարման ենթակա հատուցման ոչ լրիվ կատարումն է (այն է՝ սույն կանոնների խախտմամբ՝ սահմանված ժամկետում վճարման ենթակա գումարի չվճարումը կամ ոչ ամբողջական վճարումը), ապա
--	--	--	--	---

				Ապահովադիրն իրավունք ունի հետ ստանալու վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ:
9.	ՊԿԱ-ի պահանջով, եթե պայմանագիրը կնքելուց հետո պարզ է դարձել, որ Ապահովադիրը պայմանագիրը կնքելիս ՊԿԱ-ին (լիազորված անձին կամ ապահովագրական գործակալին) ներկայացրել է ակնհայտ սխալ, ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության վերաբերյալ: Ընդ որում, ՊԿԱ-ն չի կարող օգտվել նշված իր իրավունքից, եթե պայմանագրի կնքման պահին նա գիտեր կամ կարող էր իմանալ, որ Ապահովադիրի կողմից ներկայացվել են ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ, կամ պայմանագիրը կնքվել է Վկայագրի համապատասխան մասերում	ՊԿԱ-ի պահանջով՝ անմիջապես	-	Ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն

	տեղեկատվության բացակայության պայմաններում, ինչպես նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում			
10.	Ապահովադրի պահանջով, եթե ՊԿԱ-ն սահմանված կարգով ծանուցել է սույն կանոնների դրույթների փոփոխման մասին և Ապահովադիրը համաձայն չէ կատարված փոփոխություններին	Ապահովադրի պահանջով՝ անմիջապես	1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի, 2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը	Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած
11.	Վկայագրով նախատեսված ապահովագրավճարի (ապահովագրավճարի առաջին կամ հերթական մասի) վճարումն Ապահովադրի կողմից կետանցվել է, և ՊԿԱ-ն ապահովագրավճարի առաջին կամ հերթական մասի վճարման վերջնաժամկետից առնվազն երեք օր առաջ Ապահովադրին ուղարկել է հիշեցում-ծանուցում (համաձայն սույն կանոնների ձև 1.2-ի)՝ ապահովագրավճարի հերթական	Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) չվճարման (կետանցման) օրվան հաջորդող օրվանից	-	

	մասը վճարելու անհրաժեշտության և չվճարելու դեպքում, որպես հետևանք ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին: Սույն կետով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից ապահովագրավճարի վճարման համար լրացուցիչ ժամկետ չի տրամադրվում:		
12.	Օրենքով նախատեսված այլ դեպքերում և կարգով		
Ապահովագրավճարի վերադարձման կարգն ու ժամկետները			
ՊԿԱ-ն սույն հավելվածով նախատեսված դեպքերում ապահովագրավճարի համապատասխան մասի վերադարձման պարտավորության ծագման դեպքում պարտավոր է վաղաժամկետ դադարեցման դիմումի (առկայության դեպքում) ստացման և ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ամսաթվերից ավելի ուշ ամսաթվից սկսած 2 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել ապահովագրավճարի համապատասխան մասը և Ապահովադրին ծանուցել (տրամադրել) վաղաժամկետ դադարեցման արդյունքում վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկը-ծանուցումը, որը պետք է առնվազն պարունակի սույն կանոնների Ձև 1.3-ով նախատեսված տեղեկատվությունը:			

(Հավելված 5-ը փոփ. է 30/01/2018թ թիվ 1-Լ)

ԱՐԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԻՆ ԿՑՎՈՂ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

Դարգեցված հաղուցումների գործընթացի դեպքում

ԴՄԱ-ին ներկայացվող փաստաթղթերի ցանկը
Տնօրոյի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (անձի նույնականացման նպատակով)
Ավտոտրանսպորտային միջոցի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը
Իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությանը սահմանված փաստաթղթերի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճենը, եթե ԴՄԱ-ին դիմել է տուժողի իրավահաջորդը
Ներկայացուցչի միջոցով գրավոր դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված անձ լինելու փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճենը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը
Լրացման հրահանգին համապատասխան լրացված համաձայնեցված հայտարարագրի բնօրինակը, բացառությամբ եթե համաձայնեցված հայտարարագիրը լրացվել է համապատասխան էլեկտրոնային ծրագրի միջոցով (ընդ որում՝ եթե որևէ փաստաթղթի բացակայության հիմքով համաձայնեցված հայտարարագրի համապատասխան տողում գծիկ է դրված, ապա սույն կանոնների համաձայն ան համարվում է պատշաճ լրացված)
Ապահովագրական պատահարի վայրում սույն կանոնների պահանջներին համապատասխան իրականացված լուսանկարները և (կամ) տեսանկյունները
Սույն կանոններով սահմանված ժամկետում դիմելու և (կամ) փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթերի կամ այլ ապացույցների բնօրինակները կամ պատճենները

Աղանդար հաղուցման գործընթաց 1-ի դեպքում


ԴՄԱ-ին ներկայացվող փաստաթղթերի ցանկը
Տնօրոյի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (անձի նույնականացման նպատակով)
Ավտոտրանսպորտային միջոցին պատճռված վնասի հատուցման գծով՝ դրա նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը
Իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությանը սահմանված փաստաթղթերի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճենը, եթե ԴՄԱ-ին դիմել է տուժողի իրավահաջորդը
Ներկայացուցչի միջոցով գրավոր դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված անձ լինելու փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճեն և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը
Ապահովագրական պատահարի վայրում իրականացված լուսանկարները և (կամ) տեսանկյունները (սովորաբար դրանք)
Ելակետ 1-ի և Ելակետ 2-ի պատճենները (ուսապատճենները)
Ավտոտրանսպորտային միջոցի բացի այլ գույքին պատճռված վնասի հատուցման գծով՝ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի, իսկ գույքը կորած լինելու դեպքում՝ նաև կորած լինելը հավաստող փաստաթղթերի և (կամ) նյութերի բնօրինակները կամ դրանց՝ նոտարապես հաստատված պատճենները
Սույն կանոններով սահմանված կարգով եռամսյա ժամկետում դիմելու և (կամ) փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթերի կամ այլ ապացույցների բնօրինակները կամ պատճենները

Աղանդար հաղուցման գործընթաց 2-ի դեպքում

ԴՄԱ-ին ներկայացվող փաստաթղթերի ցանկը
Տնօրոյի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը (անձի նույնականացման նպատակով)
Ավտոտրանսպորտային միջոցին պատճռված վնասի հատուցման գծով՝ դրա նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը
Իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությանը սահմանված փաստաթղթերի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճեն, եթե ԴՄԱ-ին դիմել է տուժողի իրավահաջորդը
Ներկայացուցչի միջոցով գրավոր դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված անձ լինելու փաստը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ դրա՝ նոտարապես հաստատված պատճենը և լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը
Ապահովագրական պատահարի գծով հարուցված գործով օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտի բնօրինակը կամ պատճենը, իսկ վերջինի բացակայության դեպքում՝ պատահարի գծով կազմված հետևյալ փաստաթղթերից որևէ մեկի և (սովորաբար դրանք) դրա հիմքում ընկած փաստաթղթերի (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն) բնօրինակները կամ պատճենները՝ քրեական գործի հարուցումը մեծելու կամ քրեական գործը կարելու և քրեական հետապնդումը դադարեցնելու կամ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) կամ 2-րդ (մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ) կետով սահմանված հիմքով քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշում կամ վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից ընդունված եզրակացություն կամ որոշում
Ավտոտրանսպորտային միջոցի բացի այլ գույքին պատճռված վնասի հատուցման գծով՝ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի, իսկ գույքը կորած լինելու դեպքում՝ նաև կորած լինելը հավաստող փաստաթղթերի և (կամ) նյութերի բնօրինակները կամ դրանց՝ նոտարապես հաստատված պատճենները
Տնօրոյի անողջությանը պատճռված վնասների հատուցման համար նաև՝
1) տուժողի կողմից ստացված վնասվածքների վերաբերյալ եզրահանգումը պարունակող դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտի (եզրակացության) բնօրինակը, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի եզրակացությունը կամ գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վկայակոչում է դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) արդյունքները, 2.1) ամբուլատոր բժշկական օգնության դեպքում՝ ամբուլատոր ըարտից թաղկածի և (կամ) բժշկական տեղեկանքի և (կամ) կոնսուլտացիոն թերթիկի և (կամ) բժշկի եզրակացության բնօրինակը, 2.2) ստացիոնար բժշկական օգնության դեպքում՝ ստացիոնար ըարտից թաղկածի (էպիկրիզի) բնօրինակը և հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման ձևի (ձև 0001) բնօրինակները
3) միանական էլեկտրոնային համակարգով պատշաճ կերպով դուրս գրված հաշիվ կամ բուժհաստատության ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված և կնքված (կնիքի սովորաբար դրանք) թղթային հաշիվ, որոնցում պետք է արտացոլված լինեն նաև բժշկական ծառայության ստացած անձի անունը, ազգանունը և մատուցված բժշկական ծառայության տեսակը, իսկ անողջությանը պատճռված վնասների գծով տուժողի կամ երրորդ անձի կողմից արդեն իսկ վճարում կատարված լինելու դեպքերում՝
ա) վճարման հաշիվ (հաշիվ-սպրանքագրի) բնօրինակը և հետևյալ փաստաթղթերից որևէ մեկի բնօրինակը՝ դրամարկային ֆիսկալային կտրոն կամ դրամարկի մուտքի օրոքը (կանխիկ վճարման դեպքում) կամ բանկային փոխանցման անդորրագիր (անկանխիկ վճարման դեպքում) կամ վճարման փաստը հավաստող այլ փաստաթուղթ՝ ներառյալ ծառայությունը մատուցած կամ ավարանքը վճարած հաստատության կողմից տրված համապատասխան տեղեկանք, 6) կամ դրամարկային ֆիսկալային կտրոն կամ դրամարկի մուտքի օրոքը (կանխիկ վճարման դեպքում), որոնցում հստակ արտացոլված է մատուցված ծառայությունների կամ ծեցքերի վարկերի վերաբերյալ տեղեկատվություն,
4) տուժողի անողջությանը պատճռված վնասների հետևանքով աշխատավարձի (ենամուտների) կորստի դեպքում՝ կորցրած աշխատավարձի (ենամուտների) չափը հաստատող փաստաթղթերի բնօրինակները
5) Տնօրոյի անողջությանը պատճռված վնասների հետևանքով աշխատունակության կորստի աստիճանը հիմնավորող փաստաթղթերի բնօրինակները:
Տնօրոյի մահվան հետ կապված հատուցում ստանալու համար նաև՝
1) Օրենքի համաձայն տուժողի մահվան հետևանքով վնասների հատուցման իրավունք ունեցող անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթերի բնօրինակները (եթե պահանջվում է հատուցել կերակրողին կորցնելու հետ կապված ծախսերը),
2) դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտի (եզրակացության) բնօրինակը կամ պատճենը, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի եզրակացությունը կամ գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վկայակոչում է դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) արդյունքները,
3) մահվան վկայականի բնօրինակը,
4) կերակրողին կորցնելու հետ կապված վնասի հատուցման չափը հավաստող փաստաթղթերի բնօրինակները (եթե պահանջվում է հատուցել կերակրողին կորցնելու հետ կապված ծախսերը)
Սույն կանոններով սահմանված ժամկետում դիմելու և (կամ) փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթերի կամ այլ ապացույցների բնօրինակներ կամ պատճեններ

1. Հաուցումը ստանալու գրավոր դիմումը ստորագրվում է երկկողմանի՝ դիմումատուի և դիմումն ընդունողի կողմից, այնուհետև ներկայացված դիմումը դիմումն ընդունած ապահովագրական ընկերության ներկայացուցչի կողմից պատճենահանվում է, և պատճենը տրվում է դիմումատուին: Սույն կետը չի տարաձուլում սույն կանոնների 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ներկայացված դիմումների վրա:
2. Ապահովագրական հաուցում ստանալու վերաբերյալ դիմումը և այլ փաստաթղթերը Բյուրոյին կարող են ներկայացվել նաև ցանկացած ապահովագրական ընկերության միջոցով, որի դեպքում դիմումը և (կամ) այլ փաստաթղթերն ընդունած ապահովագրական ընկերությունը դիմումի ստորագրված տարբերակը և կից ներկայացված փաստաթղթերը քցանավորում է և նույն օրվա ընթացքում ուղարկում է Բյուրոյի պաշտոնական էլեկտրոնային հասցեով՝ պատճենների վրա ստորագրության հավաստելով դրանք բնօրինակին համապատասխանելու փաստը:
3. Սույն հավելվածով տուժողի նույնականացման համար ներկայացվող անձը հաստատող փաստաթուղթը ենթակա չէ ներկայացման հետևյալ նախապայմանների միաժամանակյա սովորաբար դրանք.
- 1) տուժողը հանդիսանում է Ապահովադիրը,
- 2) ապահովագրական հաուցում ստանալու վերաբերյալ դիմումը ԴՄԱ-ի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկվել է Ապահովադրի՝ Վկայագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից,
- 3) հաուցման գումարը ստանալու համար նշված չէ ԱՊԴԱ վկայագրում նշված և Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար:

Հավելված 6.1. Պարզեցված հատուցման գործընթացի գործողությունների հաջորդականություն



Հավելված 6.1-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ

Հասկացություններ



Կողմեր՝ Տուժող, Ապահովագրիչ և Ապահովագրված անձ:

Հոսքագրից հղումներ (աղյուսակի առաջին սյունյակում նշված են հղումների համարները)


1	Ապահովագրական հատուցումը մերժելու փաթեթ ծանուցելու դեպքում տվյալ դեպքով հատուցման գործընթացն ավարտվում է, եթե իրավասու անձանց կողմից սույն կանոններով սահմանված կարգով կրկնակի փորձաքննության պահանջ չի ներկայացվում:	
2	Պայման 1	ԴՍԱ-ի և Օրենքով նախատեսված այլ անձանց համաձայնությունը լրացուցիչ փորձաքննության անցկացմանը համարվում է ինքնաշխատ տրված, եթե լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը ներկայացվել է ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 2 օրվա ընթացքում:
3	Պայման 2	ԴՍԱ-ն մերժում է լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը, եթե վերջինս չի ներկայացվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 2 օրվա ընթացքում:
4	Գույքին պատճառված վնասների գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով կամ վնասը վերականգնելով՝ ըստ տուժողի կողմից հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցումից հետո կատարած ընտրության, իսկ սահմանված ժամկետում ընտրություն չկատարելու դեպքում՝ ըստ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումում կատարած ընտրության: Այն դեպքերում, երբ սույն կանոններով նախատեսված որևէ հիմքով համապատասխան գույքին պատճառված վնասների վերականգնումը գնահատվել է որպես ոչ ողջամիտ, ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով:	

Գործընթացի վերաբերյալ ընդհանուր պահանջներ

1	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների դիմումի մերժման դեպքում հետագա գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը չի վերսկսվում և շարունակվում է հաշվարկվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցման հաջորդող օրվանից սկսված:
----------	--

2	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջնային (առկայության դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցում ստանալու օրը, իսկ ԴՍԱ-ի համար՝ շահագրգիռ անձանց (շահագրգիռ անձանցից վերջինին) առաջնային (կամ լրացուցիչ (եթե արդեն իրականացվել է)) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին սույն կանոններով սահմանված կարգով ծանուցելու օրը, բայց ոչ ուշ քան փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցման համար սույն կանոններով սահմանված ժամկետի վերջին օրը:
3	Կրկնակի փորձաքննություն իրականացվելուց հետո չի կարող նշանակվել լրացուցիչ փորձաքննություն:
4	Կրկնակի փորձաքննություն և լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել առավելագույնը մեկական անգամ:
Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ	
	Գործողություն
	Ժամկետ (գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր)
	Պատասխանատու
	Պայման
	Պարտադիր գործողություն
	Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը
Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո:	
Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ:	

Հավելված 6.2. Ստանդարտ հատուցման գործընթաց 1-ի գործողությունների հաջորդականություն



Հավելված 6.2-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ**Հասկացություններ**



Կողմեր՝ տվյալ պատահարում ներգրավված Տուժողներ, Ապահովադիրներ և Ապահովագրված անձինք:

Հոսքագրից հղումներ (աղյուսակի առաջին սյունակում նշված են հղումների համարները)

1	Պայման 1	1. Ելակետ 1-ում հետևյալ նշումներից որևէ մեկի առկայություն՝ 1) պատահարին մասնակից վարորդներից միայն մեկի կողմից «Մեղավոր եմ ամբողջությամբ» նշման առկայություն, մյուսի (մյուսների) կողմից՝ «Մեղավոր չեմ ամբողջությամբ» նշման (նշումների) առկայություն, կամ 2) պատահարին մասնակից առնվազն 2 վարորդների կողմից «Մեղավոր եմ մասամբ» նշման առկայություն, մյուսների (առկայության դեպքում) կողմից՝ «Մեղավոր չեմ ամբողջությամբ» նշումների առկայություն, և 2. Ելակետ 1-ում կատարված նշումներին ԴՍԱ-ի համաձայնություն:
	Գործողություն 1	Ելակետ 1-ում կատարված նշումներին համաձայնության մասին հարցում (Ձև 3) Ելակետ 1-ում նշված մեղավոր վարորդի (վարորդների) վարած ՏՄ վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ին (ՊԿԱ-ներին):
2	Պայման 2	Պայման 1-ի պահանջների կամ դրանցից որևէ մեկի բացակայություն:
	Գործողություն 2	Պատճառի փորձաքննության նշանակում (պատվերի (Ձև 4.1) ներկայացում) փորձագետին և այդ մասին ծանուցում (Ձև 9.1) պատահարին մասնակից ՏՄ-ների վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր կնքած ՊԿԱ-ին (ՊԿԱ-ներին):
3		Ելակետ 1-ում նախնական մեղավորության վերաբերյալ նշումներին նշումների համաձայն մեղավոր վարորդի (վարորդների) վարած ՏՄ վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) կողմից համաձայնության տրամադրման պահից պատահարի պատճառների առաջնային փորձաքննությունը համարվում է նշանակված և ստացված, և որպես փորձագետի եզրակացություն ընդունվում է Ելակետ 1-ը, որով հաստատված են համարվում մեղավորության մասին նախնական նշումները: Սույն կետով նախատեսված համաձայնության տրամադրումն իրականացվում է սույն կանոններով սահմանված ժամկետում պատահարի

	պատճառների փորձաքննություն չնշանակելու միջոցով: Սույն կետով նախատեսված դեպքերում ԴՍԱ-ն և ՊԿԱ-ն (ՊԿԱ-ները), համաձայնության տրամադրմամբ հրաժարվում են հետագայում տվյալ պատահարի գծով պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության իրականացման պահանջ ներկայացնելու իրենց իրավունքից:	
4	Ելակետ 1-ում կատարված նշումներին համաձայնության մասին հարցում ստացած և սույն կանոնների համաձայն պատահարի պատճառների փորձաքննություն նշանակած ՊԿԱ-ի կողմից հարցումն ստանալուց հետո՝ տվյալ տեսակի փորձաքննության իրականացման համար սահմանված ժամկետում, համապատասխան փորձաքննության արդյունքների ստացումը և միասնական էլեկտրոնային հարթակում տեղադրումը չապահովելու դեպքում որպես փորձագետի եզրակացություն ընդունվում է Ելակետ 1-ը, որով հաստատված են համարվում մեղավորության մասին նախնական նշումները: Սույն կետով նախատեսված դեպքում միասնական էլեկտրոնային հարթակում փորձաքննության արդյունքների տեղադրման համար սահմանված ժամկետին հաջորդող օրվանից առկա են համարվում սույն աղյուսակի 3-րդ կետով նախատեսված պայմանները՝ այդ կետով սահմանված հետևանքներով, և դրանից հետո ստացված փորձաքննության արդյունքները համարվում են չեղյալ ու ենթակա չեն տեղադրման միասնական էլեկտրոնային հարթակում:	
5	Ապահովագրական հատուցումը մերժելու փաթեթ ծանուցելու դեպքում տվյալ դեպքով հատուցման գործընթացն ավարտվում է, եթե իրավասու անձանց կողմից սույն կանոններով սահմանված կարգով կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ դիմում չի ներկայացվում:	
6	ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) անունից պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնելու և լրացուցիչ փորձաքննության իրականացմանը համաձայնություն տրամադրելու նպատակահարմարությունը որոշում և Օրենքով և սույն հավելվածով նախատեսված իրավունքն իրականացնում է ԴՍԱ-ն:	
7	Պայման 3	ԴՍԱ-ի և Օրենքով նախատեսված այլ անձանց համաձայնությունը լրացուցիչ փորձաքննության անցկացմանը համարվում է ինքնաշխատ տրված, եթե լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը ներկայացվել է ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 2 օրվա ընթացքում
8	Պայման 4	ԴՍԱ-ն մերժում է լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը, եթե վերջինս չի ներկայացվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 2 օրվա ընթացքում:

9	Գույքին պատճառված վնասների գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով կամ վնասը վերականգնելով՝ ըստ տուժողի կողմից հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցումից հետո կատարած ընտրության, իսկ սահմանված ժամկետում ընտրություն չկատարելու դեպքում՝ ըստ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումում կատարած ընտրության: Այն դեպքերում, երբ գույքին պատճառված վնասի ընդհանուր չափը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը գույքի շուկայական արժեքի 80 տոկոսը գերազանցելու կամ սույն կանոններով նախատեսված այլ հիմքով այդ գույքին պատճառված վնասների վերականգնումը գնահատվել է որպես ոչ ողջամիտ, ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով:
Գործընթացի վերաբերյալ ընդհանուր պահանջներ	
1	Միևնույն պատահարի գծով ԱՊՊԱ համակարգում պատճառների առաջնային փորձաքննություն կարող է նշանակվել և իրականացվել մեկ անգամ, որի արդյունքները հիմք են ընդունվում, որպես առաջնային փորձաքննության արդյունքներ տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում: Համապատասխանաբար՝ 1. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության պատվեր ներկայացված լինելու վերաբերյալ սույն կանոններով սահմանված կարգով ծանուցում ստացած Ապահովագրողները տվյալ պատահարի գծով պատճառների առաջնային փորձաքննության առանձին պատվեր չեն ներկայացնում և արդեն իսկ նշանակված փորձաքննությունն Օրենքի իմաստով համարվում է նշանակված նաև իրենց կողմից, 2. տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների առաջնային փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները, 3. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության եզրակացությանն առաջին անգամ ծանուցվելուց հետո՝ Օրենքով սահմանված ժամկետում, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չներկայացվելու դեպքում տվյալ պատահարով հատուցման մյուս բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների լրացուցիչ և կրկնակի փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները:
2	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների դիմումի մերժման դեպքում հետագա գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը չի վերսկսվում և շարունակվում է հաշվարկվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցման հաջորդող օրվանից սկսված:


3	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջին անգամ տվյալ առաջնային (առկայության դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցում ստանալու օրը (անկախ այն հանգամանքից՝ տվյալ, թե՞ այլ հատուցման գործընթացի շրջանակներում են համապատասխան արդյունքները ծանուցվել), իսկ փորձաքննություն նշանակած ԴՍԱ-ի համար՝ շահագրգիռ անձանց (շահագրգիռ անձանցից վերջինին) առաջին անգամ տվյալ առաջնային (կամ լրացուցիչ (եթե արդեն իրականացվել է)) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին սույն կանոններով սահմանված կարգով ծանուցելու օրը, բայց ոչ ուշ քան փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցման համար սույն կանոններով սահմանված ժամկետի վերջին օրը:
4	Պատահարի պատճառների կամ գույքին պատճառված վնասների կրկնակի փորձաքննություն իրականացվելուց հետո համապատասխանաբար միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների կամ տվյալ գույքին պատճառված վնասների լրացուցիչ փորձաքննություն չի կարող նշանակվել:
5	Միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների, ինչպես նաև տվյալ գույքին պատճառված վնասների կրկնակի և լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել առավելագույնը մեկական անգամ:
6	Կրկնակի փորձաքննության արդյունքները հիմք են ընդունվում տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում որպես կրկնակի փորձաքննության արդյունքներ: Համապատասխանաբար, պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության արդյունքների առկայության դեպքում տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները:
Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ	
	Գործողություն
	Ժամկետ (գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր)
	Պատասխանատու
	Պայման
	Պարտադիր գործողություն

-----➔	Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը
Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո:	
Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ:	
Հոսքագրում զուգահեռ գործողությունները տարբեր ժամկետներ ունենալու դեպքում հիմք է ընդունվում առավելագույն ժամկետ ունեցող գործողության ժամկետը:	

Հավելված 6.3-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ		
Հասկացություններ		
Կողմեր՝ տվյալ պատահարում ներգրավված Տուժողներ, Ապահովադիրներ և Ապահովագրված անձինք:		
Հոսքագրից հղումներ (աղյուսակի առաջին սյունակում նշված են հղումների համարները)		
1	Ապահովագրական հատուցումը մերժելու փաթեթ ծանուցելու դեպքում տվյալ դեպքով հատուցման գործընթացն ավարտվում է, եթե իրավասու անձանց կողմից սույն կանոններով սահմանված կարգով կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ դիմում չի ներկայացվում:	
2	ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) անունից պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնելու և լրացուցիչ փորձաքննության իրականացմանը համաձայնություն տրամադրելու նպատակահարմարությունը որոշում և Օրենքով նախատեսված իրավունքն իրականացնում է ԴՍԱ-ն:	
3	Պայման 3	ԴՍԱ-ի և Օրենքով նախատեսված այլ անձանց համաձայնությունը լրացուցիչ փորձաքննության անցկացմանը համարվում է ինքնաշխատ տրված, եթե լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը ներկայացվել է ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 2 օրվա ընթացքում
4	Պայման 4	ԴՍԱ-ն մերժում է լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը, եթե վերջինս չի ներկայացվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 2 օրվա ընթացքում:
5	Գույքին պատճառված վնասների գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով կամ վնասը վերականգնելով՝ ըստ տուժողի կողմից հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցումից հետո կատարած ընտրության, իսկ սահմանված ժամկետում ընտրություն չկատարելու դեպքում՝ ըստ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումում կատարած ընտրության: Այն դեպքերում, երբ գույքին պատճառված վնասի ընդհանուր չափը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը գույքի շուկայական արժեքի 80 տոկոսը գերազանցելու կամ սույն կանոններով նախատեսված այլ հիմքով այդ գույքին պատճառված	

	վնասների վերականգնումը գնահատվել է որպես ոչ ողջամիտ, ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով:
Գործընթացի վերաբերյալ ընդհանուր պահանջներ	
1	Միևնույն պատահարի գծով ԱՊՊԱ համակարգում պատճառների առաջնային փորձաքննություն կարող է նշանակվել և իրականացվել մեկ անգամ, որի արդյունքները հիմք են ընդունվում, որպես առաջնային փորձաքննության արդյունքներ տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում: Համապատասխանաբար՝ 1. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության պատվեր ներկայացված լինելու վերաբերյալ սույն կանոններով սահմանված կարգով ծանուցում ստացած Ապահովագրողները տվյալ պատահարի գծով պատճառների առաջնային փորձաքննության առանձին պատվեր ներկայացնում, և արդեն իսկ նշանակված փորձաքննությունն Օրենքի իմաստով համարվում է նշանակված նաև իրենց կողմից, 2. տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների առաջնային փորձաքննության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները, 3. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության եզրակացությանն առաջին անգամ ծանուցվելուց հետո՝ Օրենքով սահմանված ժամկետում, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չներկայացվելու դեպքում տվյալ պատահարով հատուցման մյուս բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների լրացուցիչ և կրկնակի փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները:
2	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների դիմումի մերժման դեպքում հետագա գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը չի վերսկսվում և շարունակվում է հաշվարկվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցման հաջորդող օրվանից սկսված:
3	Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջին անգամ տվյալ առաջնային (առկայության դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցում ստանալու օրը (անկախ այն հանգամանքից՝ տվյալ, թե՞ այլ հատուցման գործընթացի շրջանակներում են համապատասխան արդյունքները ծանուցվել), իսկ փորձաքննություն նշանակված ԴՍԱ-ի համար՝ շահագրգիռ անձանց (շահագրգիռ անձանցից վերջինին) առաջին անգամ տվյալ

	առաջնային (կամ լրացուցիչ (եթե արդեն իրականացվել է)) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին սույն կանոններով սահմանված կարգով ծանուցելու օրը, բայց ոչ ուշ քան փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցման համար սույն կանոններով սահմանված ժամկետի վերջին օրը:
4	Պատահարի պատճառների կամ գույքին պատճառված վնասների կրկնակի փորձաքննություն իրականացվելուց հետո համապատասխանաբար միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների կամ տվյալ գույքին պատճառված վնասների լրացուցիչ փորձաքննություն չի կարող նշանակվել :
5	Միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների, ինչպես նաև տվյալ գույքին պատճառված վնասների կրկնակի և լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել առավելագույնը մեկական անգամ:
6	Կրկնակի փորձաքննության արդյունքները հիմք են ընդունվում տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում որպես կրկնակի փորձաքննության արդյունքներ: Համապատասխանաբար, պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության արդյունքների առկայության դեպքում տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները:
7	Անձնական վնասների հատուցման գործընթացում կիրառելի չեն (շրջանցվում են) գույքին պատճառված վնասների փորձաքննության և հատուցման ձևի ընտրության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները:
8	Մեկ ավտոտրանսպորտային միջոցի մասնակցությամբ ԱՊՊԱ պատահարի հետևանքով տուժողին պատճառված անձնական վնասների հատուցման գործընթացում կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների փորձաքննության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները:
9	Եթե առկա է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով հարուցված վարչական գործ, և ապահովագրական հատուցման վճարումը կախված է այդ գործի ելքից, ապա փորձաքննություն նշանակելու, ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշում ընդունելու կամ փորձաքննության անցկացման, ինչպես նաև այդ որոշումների և փորձաքննության արդյունքների մասին ծանուցելու՝ Օրենքով և սույն կանոններով սահմանված ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը: Ընդ որում, ապահովագրական պատահարի հիման վրա հարուցված քրեական գործով վարույթը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) կամ 2-րդ (մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ) կետով

	սահմանված հիմքով կասեցվելը դիտվում է որպես հարուցված գործն ըստ էության լուծող դատական ակտի չընդունում, որի դեպքում Օրենքի 21-րդ հոդվածի ուժով պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է փորձագետի (բժշկական կամ այլ հաստատության կամ մասնագետի) կողմից:
10	Ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տուժողի կողմից տվյալ ԱՊՊԱ պատահարի հետևանքով առաջացած անձնական վնասի չափի վրա ազդող լրացուցիչ փաստաթղթեր ԴՍԱ-ին ներկայացնելը Օրենքի և սույն կանոնների իմաստով չի դիտվում որպես ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ նոր դիմում, և ԴՍԱ-ն, ստանալով համապատասխան փաստաթղթերը, պարտավոր է վերաբացել նախկինում սկսված հատուցման գործընթացը և երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնել նշանակված ապահովագրական հատուցման չափը մեծացնելու (լրացուցիչ ապահովագրական հատուցում վճարելու), նվազեցնելու կամ ապահովագրական հատուցման վճարումը դադարեցնելու մասին՝ ընդունված որոշման հետ կապված հետագա գործընթացները կազմակերպելով Հավելված 6.3-ով սահմանված ընդհանուր կարգով:
Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ	
	Գործողություն
	Ժամկետ (գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր)
	Պատասխանատու
	Պայման
	Պարտադիր գործողություն
	Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը
Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո:	
Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ:	
Հոսքագրում զուգահեռ գործողությունները տարբեր ժամկետներ ունենալու դեպքում հիմք է ընդունվում առավելագույն ժամկետ ունեցող գործողության ժամկետը:	

Հավելված 6.3.1

«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոնների

ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. ԱՊՊԱ պատահարի հետևանքով տուժողների առողջությանը պատճառված վնասների հետ կապված կանխավճարների համակարգում կանխավճարների կատարման պարտավորություն ունեցող անձը ԴՍԱ-ն է:

2. Կանխավճարները կատարվում են ԱՊՊԱ պատահարի հետևանքով տուժողներին ամբուլատոր-առաջնային և հիվանդանոցային բժշկական օգնություն ցուցաբերելու և առողջությունը վերականգնելու հետ կապված ծախսերի գծով:

3. Կանխավճարները կատարվում են նախքան պատահարի մեջ սահմանված կարգով մեղավորության որոշումը կամ անհայտ Ավտոտրանսպորտային միջոցով անձնական վնասի պատճառման հանգամանքի հաստատումը և (կամ) նման որոշումները պարունակող փաստաթղթի՝ ԴՍԱ-ի կողմից ստացումը:

4. Կանխավճարները կատարվում են յուրաքանչյուր տուժողին մինչև հինգ հարյուր հազար ՀՀ դրամի, իսկ ԴՍԱ-ի հայեցողությամբ՝ ավելի մեծ գումարի (բայց ոչ ավելի, քան մեկ տուժողի գծով՝ ըստ յուրաքանչյուր տուժողի անձնական վնասների համար սահմանված ապահովագրական գումարը, և մեկ պատահարի գծով՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի անձնական վնասների համար սահմանված ապահովագրական գումարը) չափով:

5. Կանխավճարների գործընթացն սկսելու համար հիմք է հանդիսանում որևէ շահագրգիռ անձի կողմից գրավոր՝ ներառյալ էլեկտրոնային եղանակով, կամ բանավոր՝ ԴՍԱ-ի շուրջօրյա գործող հեռախոսահամարով ստացված զանգով պատահարի մասին ԴՍԱ-ի տեղեկացումը: Նման տեղեկացումից հետո ԴՍԱ-ն պետք է անմիջապես կապ հաստատի տուժողին ամբուլատոր-առաջնային և (կամ) հիվանդանոցային բժշկական օգնության և (կամ) առողջության վերականգնման ուղղությամբ ծառայություններ մատուցող կամ մատուցած բժշկական հաստատության հետ և միջոցներ ձեռնարկի սույն հավելվածով սահմանված կարգով համապատասխան ծառայությունների գծով կանխավճարներ կատարելու ուղղությամբ:

6. Կանխավճարները վճարվում են սույն կանոնների Հավելված 8.2-ի Ենթահավելված 8.2.1-ով սահմանված պահանջներին համապատասխան:

7. Կանխավճարները վճարվում են ԴՍԱ-ին՝ ներառյալ նրա անունից ապահովագրական հատուցումների կարգավորման իրավասությամբ օժտված

աշխատակցին (ներկայացուցչին) ներկայացված հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

1) քաղվածք հիվանդության պատմությունից (էպիկրիզ) և (կամ) ամբուլատոր քարտից՝ հաստատված բուժող բժշկի ստորագրությամբ և բժշկական հաստատության կնիքով (առկայության դեպքում),

2) միասնական էլեկտրոնային համակարգով պատշաճ կերպով դուրս գրված հաշիվ կամ բուժհաստատության ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) թղթային հաշիվ, որոնցում պետք է արտացոլված լինեն նաև բժշկական ծառայություն ստացած անձի անունը, ազգանունը և մատուցված բժշկական ծառայության տեսակը,

3) բժշկական օգնություն կամ առողջության վերականգնման հետ կապված ծառայություն ստացած (ստացող) անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

4) բժշկական օգնություն կամ առողջության վերականգնման հետ կապված ծառայություն ստացած (ստացող) անձից կամ նրա օրինական ներկայացուցչից վերցված՝ համապատասխան Կանխավճարի վճարման պարտավորություն ունեցող անձին ուղղված ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնների 1-ին հավելվածի Ձև 2.2-ի, կամ տուժողի կողմից այդպիսի դիմում ներկայացնելու անհնարինության (մահվան, անգիտակից վիճակում գտնվելու կամ այլ հիմքով) վերաբերյալ գրավոր հիմնավորում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անհնարինությունն ակնհայտ բխում է սույն կետի համաձայն ներկայացված այլ փաստաթղթերից: Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված դիմումը կարող է ներկայացվել ինչպես անմիջապես համապատասխան Ապահովագրողի ներկայացուցչին, այնպես էլ բժշկական հաստատության միջոցով:

8. ԴՍԱ-ն պարտավոր է հաշիվը սույն կանոնների համաձայն իրեն ներկայացվելու ամսաթվից հետո՝ 5 օրվա ընթացքում, կանխավճարի կատարման համար սույն կանոններով նախատեսված բոլոր փաստաթղթերի առկայության դեպքում՝ կատարել վճարում, իսկ որևէ փաստաթղթի բացակայության դեպքում՝ բժշկական հաստատությանը գրավոր ներկայացնել սույն կանոններով նախատեսված այն փաստաթղթերի ցանկը, որոնք դեռևս իրեն չեն ներկայացվել: Նման դեպքերում ԴՍԱ-ն կանխավճարների կատարումն իրականացնում է վերջին փաստաթուղթն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում:

9. Առանց ապահովագրական հատուցում ստանալու մասին դիմումի կանխավճարներ կատարող ԴՍԱ-ն պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի համապատասխան տուժողը կամ նրա իրավահաջորդը անձամբ կամ ներկայացուցչի միջոցով առաջին իսկ հնարավորության դեպքում ներկայացնեն այդ դիմումը: Եթե պատահարից հետո՝ երեք ամսվա ընթացքում, ԴՍԱ-ն հնարավորություն չի ունենում

ձեռնարկել սույն կետով նախատեսված գործողությունները կամ չնայած ձեռնարկած ողջամիտ միջոցներին՝ համապատասխան տուժողը կամ նրա իրավահաջորդը սահմանված ձևի ապահովագրական հատուցում ստանալու մասին դիմում չի ներկայացնում կամ հրաժարվում է այդպիսի դիմում ներկայացնելուց, ապա ԴՍԱ-ն իրավունք ունի դադարեցնել տվյալ տուժողի գծով կանխավճարների հետագա կատարումը և (կամ) հետադարձ պահանջի իրավունքով դիմել նրան կամ նրա իրավահաջորդին՝ արդեն վճարված կանխավճարների գումարները հետ ստանալու պահանջով:

10. Սույն կանոններով սահմանված կարգով ԴՍԱ-ի կողմից հատուցում վճարելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում վճարված կանխավճարների գումարները համարվում են համապատասխան տուժողին (նրա իրավահաջորդին) կատարվող ապահովագրական հատուցման կանխավճարներ և նվազեցվում են նրան վճարվող հատուցման գումարից: Տուժողին հատուցման վճարումը մերժելու մասին որոշում կայացվելու դեպքում ԴՍԱ-ն միջոցներ է ձեռնարկում համապատասխան տուժողի համար որպես կանխավճարներ վճարված գումարները նրանից կամ նրա իրավահաջորդից հետ ստանալու ուղղությամբ, բացառությամբ եթե Բյուրոն հատուցման վճարումը մերժում է Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով, որի դեպքում վերջինի կատարած կանխավճարները համարվում են տվյալ տուժողին կամ նրա իրավահաջորդին ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացրած ԴՍԱ-ի կողմից կատարվող ապահովագրական հատուցման կանխավճարներ և նվազեցվում նրան վճարվող հատուցման գումարից:

11. Սույն հավելվածով սահմանված համակարգը չի գործում՝


1) այն անձանց նկատմամբ, ովքեր Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չեն օգտվում,

2) Օրենքի 25-րդ հոդվածով սահմանված վնասների մասով:

12. Այն դեպքում, երբ կանխավճարների վճարման համար փաստաթղթերն ստանալուց կամ դրանց դիմաց վճարումն իրականացնելուց հետո պարզվում է, որ փաստաթղթերն ստացած և (կամ) վճարումն իրականացրած անձը ԴՍԱ-ն չէ, ապա այդ անձը պարտավոր է իրեն փաստաթղթեր ներկայացրած, սակայն վճարում չստացած բժշկական հաստատություններին ողջամիտ ժամկետում հայտնել իրական ԴՍԱ-ի մասին, ինչպես նաև ԴՍԱ-ին փոխանցել տվյալ տուժողի գծով իր մոտ առկա բոլոր փաստաթղթերը: ԴՍԱ-ն, ստանալով սույն կանոնների 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և դրանց դիմաց ԴՍԱ չհանդիսացող անձի կողմից վճարում կատարված լինելու փաստը հավաստող փաստաթղթերը, պարտավոր է 3

աշխատանքային օրվա ընթացքում վերջինին վերադարձնել վճարված
կանխավճարի գումարները: (12-րդ կետը լրաց. է 30/01/2018թ թիվ 1-Լ)

Նախնական զննության գործընթացի գործողությունների հաջորդականություն



1. Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո,
